## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետի որոշումով Մայր Աթոռում վերակազմակերպուեց «Հայաստանեայց Եկեղեցու Միջեկեղեցական Յարաբերութիւններ» բաժինը, հիմնական նպատակ ունենալով առաւել գործօն կերպով բերելու Հայ Եկեղեցու մասնակցութիւնը համաշխարհային էկումենիկ շարժմանը եւ աշխարհի խաղաղութեան ամրապնդման գործին, սերտ յարաբերութիւններ մըշակելով եւ գործակցելով քրիստոնեայ եկեղեցիների, Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի եւ այլ կրօնական եւ էկումենիկ կազմակերպութիւնների հետ:

«Հայաստանեայց Եկեղեցու Միջեկեղեցական Յարաբերութիւններ» բաժնի պատասխանատու վարիչ է նշանակուած Մայր Աթոռիս միաբան Հոգեշնորհ Տ. Արսէն Ծ. Վրդ. Բերբերեանը:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

11 Յունուարի 1973 թ.
Ս. Էջմիածին